

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ/21/04»***

ք. Թալին

«16» օգոստոսի 2021թ.

«Թալինի համայնքապետարանը», ի դեմս աշխատակազմի քարտուղար Ավետիք Ավետիսյանի, որը գործում է Համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԵՄՀ ՔԸՆՍԹՐԱՔՇԸՆ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յուրիկ Մոնտյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման աշխատանքների կատարման* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից 80 օրացուցային օր:
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

²⁶ Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն սահմանելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ՝ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնստրուկցիայի անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնստրուկցիայի անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի

ները համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5/հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ

դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար
վճարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **12384000** (Տասներկու միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 2064000 (Երկու միլիոն վաթսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՐԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՅՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

այսինքն կարող է լինել նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանավորված պայմանագրի 22 ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:³²

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների բաղեցուցյալ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (սնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

³² Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
**«Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման աշխատանքներ»-ի
ԿԱՏԱՐՄԱՆ**

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը հազ. ՀՀ դրամ | Ընդամենը հազ. ՀՀ դրամ | |
|----|--|----------------|--------|-----------------------------|-----------------------|--------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |
| | 1 Շինարարական աշխատանքներ | | | | 50,60%, | որից |
| | ՔԱՆՂՈՒՄ ԵՎ ԱՊԱՍՏՈՂՏԱԺՈՒՄ | | | | | 6,35% |
| 1 | Մոտ 240-260 մմ հաստոսության միջնորմների ապամոնտաժում /32.79մ ² / | մ ³ | 8,2 | 14,719 | 120,694 | |
| 2 | Փայտե սանդուղքի ապամոնտաժում /Բարձրությունը 0.87 մ/ | մ ² | 1,46 | 1,4647 | 2,138462 | |
| 3 | Մոտ 1800x2600 մմ չափերով փայտե դռների ապամոնտաժում /1 հատ/ | մ ² | 4,68 | 1,4647 | 6,854796 | |
| 4 | Մոտ 2800x2700 մմ չափերով փայտե դռների ապամոնտաժում /1 հատ/ | մ ² | 7,56 | 1,4647 | 11,073132 | |
| 5 | Մոտ 900x2011 մմ չափերով փայտե դռների ապամոնտաժում /1 հատ/ | մ ² | 1,81 | 1,4647 | 2,651107 | |
| 6 | Մոտ 2480x1800 մմ չափերով փայտե շրջանակով (երկշերտ) լուսամուտների (ապակին միաշերտ) ապամոնտաժում /2 հատ/ | մ ² | 4,64 | 1,7169 | 7,966416 | |
| 7 | Բոլոր չգործող բաց մալուխների ապամոնտաժում | զմ | 100 | 0,0485 | 4,85 | |
| 8 | Ջեռուցման խողովակների և կցամասերի ապամոնտաժում | զմ | 12 | 0,1959 | 2,35128 | |
| 9 | Բոլոր էլեկտրական վարդակների, անջատիչների, բաժանարար տուփերի, լուսատուների ապամոնտաժում | հատ | 24 | 0,2939 | 7,05384 | |

| | | | | | | |
|----|---|----------------|-------|--------|-----------|-------|
| | տրամների քանդումից հետո ՔՄԳ-ի ներսի կողմից ներքին երկայնական (դահլիճի պատ) և լայնական (միջանցքի պատ) պատերի ամբողջ մակերևույթից և արտաքին պատերի բոլոր շեկայություններից և ջեռուցիչների խորշերից, ինչպես նաև միջանցքի կողմից ՔՄԳ-ի մուտքի պատի հարդարարական շերտերի (գաջ, մոտ 3-6 սմ) ամբողջական քանդում | մ ² | 104,6 | 0,485 | 50,70675 | |
| 11 | Շրիշակների ապամոնտաժում | զմ | 45 | 0,194 | 8,73 | |
| 12 | Հատակի փայտե մանրահատակի քանդում | մ ² | 91,7 | 0,194 | 17,7898 | |
| 13 | Կրող պատի (տուֆ) մեջ դռան բացվածքի քանդում, չափերի մեծացման համար | մ ³ | 1,51 | 14,715 | 22,219499 | |
| 14 | Կրող քարե պատի մեջ 410(Բ)×390(Լ)×170(Խ) մմ չափերով 2 խորշերի բացում ներկառուցվող էլեկտրական և անվտանգության վահանակների (չափը 390(Բ)×340(Լ)×120(Խ)) տեղադրման համար | մ ³ | 0,054 | 39,246 | 2,1192948 | |
| 15 | 2 ՊՎՔ լուսամուտագոգերի ապամոնտաժում | զմ | 5,26 | 0,3085 | 1,6224996 | |
| 16 | Շին. աղբի հավաքում, բարձում և տեղափոխում 3լմ | տ | 15,4 | 1,94 | 29,876 | |
| | ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ | | | | | 8,80% |
| 1 | Բացվածքների փակում կանոնավոր տուֆե բլոկներից շարվաքծով, կրող պատի մեջ | մ ³ | 1,38 | 34,338 | 47,38644 | |
| 2 | Երկկողմանի ԳԿԹ (T=12 մմ) պատի (T=125 մմ) կառուցում W=100 մմ ուղղաձիգ ստաղերով | մ ² | 25,6 | 4,8985 | 125,4016 | |
| 3 | Երկկողմանի ԳԿԹ (T=12 մմ) պատի (T=75 մմ) կառուցում W=50 մմ ուղղաձիգ ստաղերով | մ ² | 5,7 | 3,9188 | 22,33716 | |
| 4 | Միակողմանի ԳԿԹ (T=12 մմ) պատի կառուցում: Գլխավոր ուղղաձիգ ստաղը (W=50 մմ) ձգվում է պատին, գետնից բարձր (շրիշակի հետևում մոնտաժվող սակառի չափով) և հասնում մինչև առաստաղ | մ ² | 17,6 | 2,9391 | 51,72816 | |
| 5 | Լուսամուտաբացվածքների և ջեռուցման խորշերի շեկայությունների կառուցում միակողմանի ԳԿԹ-ով (T=12 մմ) առանց ստաղերի: ԳԿԹ-ն պատին ձգվում է հատուկ պլաստիկ դյուբելներով, կոշտ ջերմամեկուսիչ թերթասալերի վրայից | մ ² | 9,26 | 2,9391 | 27,216066 | |
| 6 | Ջերմամեկուսիչ հանքային բամբակի (T=50 մմ) ձգում արտաքին պատերին հատուկ պլաստիկ դյուբելներով: Լշում՝ ապակե բամբակով փոխարինումը անընդունելի է | մ ² | 17,59 | 1,7169 | 30,200271 | |
| 7 | Ջերմամեկուսիչ հանքային բամբակի (T=100 մմ կամ T=2×50 մմ) ձգում արտաքին պատերին հատուկ պլաստիկ դյուբելներով: Լշում՝ ապակե բամբակով փոխարինումը անընդունելի է | մ ² | 25,27 | 3,4338 | 86,772126 | |
| 8 | Լուսամուտաբացվածքների բոլոր շեկայությունների և պատերում բոլոր ջեռուցիչների խորշերի մեջ արտաքին պատի ջերմամեկուսացում արտամղված փրփրապոլիստերով թերթասալերով (T=30 մմ) | մ ² | 9,26 | 2,4735 | 22,90461 | |
| | ԼԱՄԲԼԱՏԵ ՄԻՋԱՆՈՐՄԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ | | | | | 4,30% |

| | | | | | | |
|----|---|----------------|------|--------|--------|-------|
| | Լամինատե ճաղաշար-միջնորմի պատրաստում (ներառյալ ամրացման դետալները) և տեղադրում | մ ² | 4,5 | 15,714 | 70,713 | |
| | 2800x2070x18 մմ լամինատե թերթասալ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) կամ տեխնիկապես համարժեք | հատ | 1 | 39,188 | 39,188 | |
| 3 | Լամինատե թերթասալերի կտրատում ճշգրիտ ավտոմատացված հաստոցով | զմ | 75 | 0,097 | 7,275 | |
| 4 | Լամինատե թերթասալերի սոսնձում | մ ² | 1 | 4,8985 | 4,8985 | |
| 5 | Լամինատի երիզների (ABS) սոսնձում ճշգրիտ ավտոմատացված հաստոցով | զմ | 53 | 0,1455 | 7,7115 | |
| 6 | ABS լամինատի երիզ ըստ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) կամ տեխնիկապես համարժեք, չափը 40x1մմ: Ներառյալ լայնության նեղացումը մինչև 36 մմ | զմ | 33 | 0,291 | 9,603 | |
| 7 | ABS լամինատի երիզ ըստ Egger H1180 ST37 (նախընտրելի) կամ Egger H1212 ST33 (այլընտրանք) կամ տեխնիկապես համարժեք, չափը 18x1մմ | զմ | 18,4 | 0,1455 | 2,672 | |
| 8 | □100x50x4 մմ ուղղանկյուն պողպատե խողովակ | զմ | 2 | 2,4444 | 4,8888 | |
| 9 | L63x40x4 մմ պողպատե անկյունակ | զմ | 1 | 1,9594 | 1,9594 | |
| 10 | D=12 մմ պողպատե հոծ ձող | զմ | 3 | 0,9797 | 2,9391 | |
| 11 | D=5.5-6.5 մմ անցքերի շաղափում 4 մմ հաստությամբ պողպատե տարրերի մեջ | հատ | 92 | 0,097 | 8,924 | |
| 12 | Պողպատե տարրերի կտրատում, տարրերի խառտումով և հղկումով կտրատումից հետո | զմ | 3 | 0,194 | 0,582 | |
| 13 | Այլումինե ամրացման դետալների պատրաստում: Դետալի չափերը՝ 33(D)x20(H)x3 մմ, անցք 1՝ 13(D), անցք 2 (M3 պարուրով)՝ 4(D): Դետալ 01-ի մանրամասները տես նկագծում | հատ | 64 | 0,2425 | 15,52 | |
| 14 | Բոլոր մետաղական տարրերի (այդ թվում պտտտակների և այլն) փոշեներկում էլեկտրաստառիկ դաշտում՝ գույնը PULVER 09620.MH180 (կամ տեխնիկապես համարժեք) | մ ² | 2 | 1,9594 | 3,9188 | |
| 15 | Անցքերի շաղափում կարծր կերամագրանիտե սալերի (T=11 մմ) մեջ /ալմաստե գլխիկով գչիրի ծախսը՝ 3 հատ մեկ անցքի համար/ | հատ | 12 | 0,485 | 5,82 | |
| 16 | Անցքերի (D=6-7 մմ, L=50-100 մմ) շաղափում բետոնե հատակի և առաստաղի մեջ | հատ | 16 | 0,2425 | 3,88 | |
| 17 | Հեղույս-դյուբել (կամ դյուբել-մեխ) M(5-6)x100 մմ | հատ | 16 | 0,0485 | 0,776 | |
| 18 | Հեղույս-դյուբել (կամ դյուբել-մեխ) M(5-6)x50 մմ | հատ | 22 | 0,0485 | 1,067 | |
| 19 | Հեղույս-մանեկ M(5-6)x60 մմ | հատ | 34 | 0,0485 | 1,649 | |
| 20 | Թաքնված վեցանիստ գլխիկով պտտտակներ M3x12, DIN 7991 (ISO 10642) | հատ | 84 | 0,097 | 8,148 | |
| | ԲԱՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ | | | | | 8,00% |
| 1 | Անցքերի շաղափում պատերում Ի15մմ, L=200մմ | հատ | 13 | 0,1455 | 1,8915 | |

| | | | | | | |
|----|--|----------------|-------|--------|-----------|--------|
| | անցքերի շաղափում պատերում Ի18մմ, L=380մմ | հատ | 5 | 0,194 | 0,97 | |
| | Անցքերի շաղափում մետաղական տարրերում | հատ | 16 | 0,1455 | 2,328 | |
| | Ուժեղացման մետաղական տարրերի տեղադրում | տ | 0,357 | 175,15 | 62,582131 | |
| 5 | Ամրան Ի12A500C | տ | 0,003 | 735,94 | 2,3550048 | |
| 6 | Թերթապողպատ —6մմ | տ | 0,052 | 735,94 | 38,416016 | |
| 7 | Մետաղական անկյունակ L100x10մմ | տ | 0,217 | 735,94 | 159,99314 | |
| 8 | Մետաղական անկյունակ L75x6մմ | տ | 0,007 | 735,94 | 5,2251669 | |
| 9 | Շվեյքեր N16ո | տ | 0,06 | 735,94 | 43,935558 | |
| 10 | Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □70x50x4մմ | տ | 0,018 | 735,94 | 13,02612 | |
| 11 | Մետաղական տարրերի պաշտպանիչ սվաղի իրականացում 30մմ հաստությամբ, մետաղական ցանցի վրա | մ ² | 5,8 | 1,7169 | 9,95802 | |
| 12 | Մետաղական տարրերի պաշտպանիչ սվաղի իրականացում 50մմ հաստությամբ, մետաղական ցանցի վրա | մ ² | 8,72 | 1,9594 | 17,085968 | |
| 13 | Մետաղական ցանց | մ ² | 14,52 | 0,485 | 7,0422 | |
| 14 | Հեղույսներ M16x1.5, L=450մմ - 8 հատ | կգ | 4,7 | 0,485 | 2,2795 | |
| 15 | Մետաղական տարրերի ներկում հակակոռոզիոն ներկով, կեղտից եւ ժանգից մաքրելով | տ | 0,357 | 14,715 | 5,2576338 | |
| 16 | 510մմ հաստության տուֆի պատերի ամրանավորում Ի6Ac-I ամրանով | տ | 0,004 | 981,25 | 4,2193836 | |
| | ԱՌԱՍՏԱՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | | | | | 15,45% |
| 1 | Առաստաղի ԳԿԹ ակուստիկ պանելներ: Մեկ պանելի չափը՝ 1190x2000x12.5 մմ, 12x12 մմ չափի քառակուսի կանոնավոր անցքերով: Արտադրողը՝ Knauf կամ տեխնիկապես համարժեք: Ներառյալ ամրացման դետալները և թերթասալերի եզրերի վերջնամշակման արքեստարները: ԴՅԸ/27 ցինկապատ մոնտաժային ուղորդիչ պրոֆիլի ստորին նիստը ներկել առաստաղի գույնի: Պանելների ընդհանուր քանակը՝ 33 հատ | մ ² | 78,54 | 9,2538 | 726,79345 | |
| | ՀԱՏԱԿՆԵՐ | | | | | 36,11% |
| 1 | Կերամագրանիտե սալիկներով հատակի սալապատում: Չափը՝ 1200x600x11 մմ, տեխնիկական բնութագիրը ըստ՝ Marazzi SG501200R (կամ տեխնիկապես համարժեք): 60 հատ | մ ² | 43,2 | 10,932 | 472,25808 | |
| 2 | Կերամագրանիտե սալիկներով հատակի սալապատում: Չափը՝ 600x600x11 մմ, տեխնիկական բնութագիրը ըստ՝ Marazzi SG501200R (կամ տեխնիկապես համարժեք): 146 հատ | մ ² | 52,56 | 10,932 | 574,58066 | |
| 3 | Սալիկի ջրակայուն սոսինձ, 4 մմ 68.4մ ² | կգ | 997 | 0,194 | 193,418 | |
| 4 | Ինքնահարթեցվող լցումի հատակ, 10 մմ (ցեմենտային հիմքով) | մ ² | 94 | 1,94 | 182,36 | |
| 5 | Ց/ա նախապատրաստական շերտի կառուցում, T=35 մմ | մ ² | 94 | 2,9391 | 276,2754 | |
| | ՉԵՌՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՇԵՐ. ՇՐԷԱԿՆԵՐ ԵՎ ՄԱՌՈՒԽԱՏԱՐ ՄԱԿԱՌՆԵՐ | | | | | 2,54% |

| | | | | | | |
|------------------------|--|----------------|-------|--------|-----------|--|
| 1 | 50(Խ)X95(Բ) մմ ակոսների պատրաստում պատերի մեջ ներկառուցվող պլաստիկ սակառների տեղադրման համար | զմ | 13 | 0,7275 | 9,4575 | |
| 2 | Ցինկապատ հարդարարական անկյունակ L20 մմ: Տեղադրվում է սակառների ակոսների վերին եզրագծով, պատի սվաղի տակ | զմ | 13 | 0,194 | 2,522 | |
| 3 | MDF շրիշակ, չափը՝ 80x15 մմ, գույնը՝ սպիտակ: Պրոֆիլը ըստ նախագծի | զմ | 40 | 0,8827 | 35,308 | |
| 4 | Պատի մեջ ներկառուցված պլաստիկ սակառ 60x40 մմ, պլաստիկ կափարիչով | զմ | 12 | 0,2425 | 2,91 | |
| 5 | 25 հատ 50(W)X20(H)X200(L) մմ չափի փայտե չորսուղի սոսնձում հատակին, քայլը 600մմ: Տեղադրվում է սակառի տակ, շրիշակի հետևում | զմ | 4 | 0,9797 | 3,9188 | |
| 6 | 25 հատ 20(W)X20(H)X200(L) մմ չափի փայտե չորսուղի սոսնձում հատակին, քայլը 600մմ: Տեղադրվում է սակառի մեջ | զմ | 4 | 1,2222 | 4,8888 | |
| 7 | Ալեկարոնդե թերթասալ: Չափը՝ մոտ 2365x726 մմ, 2 հատ, եզրերը հղկված մշակված, սպիտակ գույնի, տեղադրվում է ջեռուցիչների հետևում, խորշի ամբողջ մակերեսով | մ ² | 3,43 | 17,654 | 60,55322 | |
| ԼՈՒՄԱՄՈՒՏԱԳՈԳԵՐ | | | | | | |
| Ներքին | | | | | | |
| 0,49% | | | | | | |
| 1 | Լուսամուտագոգերի տակ հարթեցման շերտի պատրաստում ցեմենտ-ավազե սվաղով կամ սալիկի սոսնձով կամ ինքնահարթեցվող լցնովի հատակով (ցեմենտային հիմքով), հաստությունը մոտ 10 մմ | մ ² | 0,585 | 3,9188 | 2,292498 | |
| 2 | 2 հատ տուֆե (կարմիր) սալ: Չափը՝ մոտ 2436x370x30 մմ: Ճակատային կողմից վերին և ստորին երկայնական եզրագծերը լծորդված 2 մմ շառավղով, հղկված, մշակված: Տեղադրվում է պատի և շեփույթների հարթության հետ հավասար | մ ² | 1,803 | 4,0158 | 7,2404874 | |
| 3 | Պողպատե անկյունակ L30 մմ: Տեղադրվում է լուսամուտագոգի տակից, ներկված սպիտակ գույնի, ըստ գծագրի | զմ | 6,1 | 2,2019 | 13,43159 | |
| ՆԵՐՔԻՆ ՀԱՐԿՈՒՄ | | | | | | |
| 10,63% | | | | | | |
| 1 | 150 մմ լայնքով ակոսների բացում՝ դեպի վարդակներ մալուխների անցկացման համար | զմ | 1,5 | 1,067 | 1,6005 | |
| 2 | 60 մմ լայնքով ակոսների բացում՝ դեպի վարդակներ մալուխների անցկացման համար | զմ | 0,6 | 0,485 | 0,291 | |

| | | | | | | |
|----|---|----------------|-----|--------|----------|-------|
| | ճաստաղի (ներառյալ հեծանները) բոլոր տեսակի ԳԿԹ-ների կարերը, պտուտակների տեղերը, էզրային և վնասված հատվածների ծեփամածկում, ամբողջ մակերեսով ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), Բարելավված որակի, առանց ծեփամածկման (բացի պտուտակներով ձգման կետերից), գույնը՝ ըստ նաախգծի | մ ² | 68 | 1,552 | 105,536 | |
| 4 | Պատերի և հեծանների գիպտոնիտ սվաղում (շաղախը՝ 70% գիպտոնիտ՝ 30% գիպս), ներառյալ շեպույթները, ՔՍԳ և միջանցք (մասնակի) | մ ² | 79 | 1,7751 | 140,2329 | |
| 5 | Պատերի հարդարարական շերտի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում, ներառյալ շեպույթները, ՔՍԳ և միջանցք (մասնակի) | մ ² | 137 | 0,291 | 39,867 | |
| 6 | Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), Բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույները ըստ նախագծի, ներառյալ շեպույթները, ՔՍԳ և միջանցք (մասնակի) | մ ² | 137 | 1,552 | 212,624 | |
| | ՕՐԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ | | | | | 1,90% |
| 1 | Ի40 մմ-ոց անցքի շաղափում մոտ 440 մմ հաստությամբ արտաքին պատերի մեջ, ինչպես նաև ԳԿԹ պատի մեջ | հատ | 1 | 0,485 | 0,485 | |
| 2 | Ի210 մմ-ոց անցքի շաղափում մոտ 550 մմ հաստությամբ արտաքին պատերի մեջ, ինչպես նաև ԳԿԹ պատի մեջ | հատ | 1 | 2,4444 | 2,4444 | |
| 3 | Ի110 մմ-ոց անցքերի շաղափում մոտ 440 և 550 մմ հաստությամբ արտաքին պատերի մեջ, օդի ներածման/արտածման համար | հատ | 4 | 0,9797 | 3,9188 | |
| 4 | Պոլիպրոպիլեն օդատար հարթ խողովակի տեղադրում, Ի200 մմ | գմ | 1 | 0,8827 | 0,8827 | |
| 5 | Պոլիպրոպիլեն օդատար հարթ խողովակի տեղադրում, Ի100 մմ | գմ | 3 | 0,485 | 1,455 | |
| 6 | Ի100 մմ խողովակի համար մետաղական ցանց | հատ | 4 | 0,388 | 1,552 | |
| 7 | Ի100 մմ խողովակի համար մետաղական/պլաստիկ ճաղաշար/ցանց, մեջը տեղադրված հակամիջատային ցանց պատի արտաքին կողմից, ներկված մոխրագույն կամ պատի գույնի | հատ | 4 | 0,9797 | 3,9188 | |
| 8 | Անաղմուկ դասի ≥23 դԲ, առանցքային օդամուղ, Ի200 մմ խողովակի համար, ավտոմատ կարգավորվող շերտավարագույրով (սպիտակ գույնի): Տեղադրվում է պատի մեջ, արտաքին պատի ներսի կողմից | հատ | 1 | 72,12 | 72,1195 | |
| 9 | Ի200 օդանցքի շերտավարագույր, պլաստիկ կամ մետաղական, ներկված մոխրագույն կամ պատի գույնի | հատ | 1 | 0,9797 | 0,9797 | |
| 10 | Անցքերի և խողովակի միջև արանքի (5 մմ) հերմետիզացում սիլիկոնով կամ ջերմամեկուսից փրփուտով | հատ | 6 | 0,2425 | 1,455 | |
| | ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ | | | | | 2,83% |

| | | | | | | | |
|-----------------------------|---|----------------|------|--------|----------|---------------|--------------|
| | Քարավարձարագույրներ (ներառյալ մեխանիզմները), 3 հատ: Կտորի գույնը RAL 7035 կամ RAL 7044: Կտորի նմուշը համաձայնեցնել ճարտարապետի հետ: Տեղադրվում է լուսամուտի բացվածքից դուրս, պատի ներսի մակերևույթի վրա ըստ գծագրի | մ ² | | | | | |
| | | | 13 | 10,234 | 133,0355 | | |
| | Համակարգչային ցանցի մուտքի և հատակի մեջ ուղիների կազմակերպում | | | | | | 0,38% |
| 1 | Ի40 մմ անցքի շաղափում ծածկի սալերի մեջ | հատ | 2 | 0,485 | 0,97 | | |
| 2 | Անցքի թողարկման այրումինե դետալ, L-աձև պրոֆիլով, ներկված ակրիլիկ ներկով Ի30 մմ անցքի համար | հատ | 2 | 4,1613 | 8,3226 | | |
| 3 | ՊՎՔ խողովակ, Ի30 մմ | գմ | 24 | 0,2425 | 5,82 | | |
| 4 | ՊՎՔ անկյունակ, Ի30 մմ | հատ | 11 | 0,2425 | 2,6675 | | |
| | ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | | | | | 2,22% |
| 1 | Օրգանական ապակուց ցուցափեղկերի և արկղերի ամրացում՝ պատերին / միջնորմին | հատ | 6 | 2,4444 | 14,6664 | | |
